

373(47.995)

Ն-25

Ա. Նախապետական

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

1882—3 ռւս. տարուայ

ԱՄԵՆԱՊԱՏՈՒ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶՆԵ ՀԱՅՐ

ՍՐԲԱԶՆԱՐԱՐ ՀԱՅՐ

ԵՒ ՄԵԾԱՐՈՒ ՀԱՆԳԻՍԱԿԱՆԻ.

Այս օրուայ կատարած հոգեհանգստեան կարգը յեղեցրեց մեզ այն մեծ կորուստը, որ կրեց ձեմարանը անցեալ տարի Նեկտեմերի 6 թն. Աղգիս Վեհափառ Կաթողիկոսը կնքեց իւր կեանքը՝ խոր տրտմութեան մէջ ձգելով ամբողջ Աղգի հետ ի միասին եւ իւր ձեռակերտ ձեմարանը, որի համար յրթեացս երկար տարիների ոչինչ ջանք եւ հոգացողութիւն խնայած էր եւ որ հասել էր արդէն այն գրութեան, երբ մի քանի ամսից յետոյ առաջին անգամ պէտք է աւարտէին իւրեանց ուսման ընթացքը մի քանի ուսանողներ, որոնցով սկիզբն էր դնուելու յաջորդ տարիների համար հետ ղհետէ Աղգին պարգեւելու բարձր ուսումն ստացած մանկավարժական պատրաստութեամբ ուսուցիչներ եւ եկեղեցական պաշտօնեաներ: Այսօր, երբ ձեմարանը իւր կարճատեւ գոյութիւնից յետոյ կատարումէ իւր խնամեալ տարեգարձը եւ առաջին շրջանի ուսումնաւարանների մասին աւետում է հայ հասարակութեան, բացակայ է այն Անձը, որ երկար տարիներ սպասում էր այս օրուան: Այս, այս տխուր յեղաշրջութիւնը մեր ամենիս ուրախութիւնը տրտմութեան է փոխում:

Մանաւանդ զգալի էր Վեհափառ Գեորգ Գ. ի մահը այն կողմից, որ ձեմարանը նիւթապէս անապահով գրութեան մէջ մրնարով, շատերի մէջ կասկած էր մնում — մի՞ գուցէ Վեհ. Հիմնադրի հետ ի միասին կնքէ իւր գոյութիւնը եւ այս մեծ հաստատութիւնը: Այս կասկածը բարեբաղդաբար միանգամայն անհիմն եղաւ. այսօր Ս. Արնօղը իւր բոլոր ջանքը եւ հոգացողու-



Թիւնը գործ է դնում ձեմարանը իւր գրութեամբ պահպանելու, չնայելով վանքի ներկայ սուղ միջոցներին: Քանիցս անգամ Ամենապատիւ Սրբազան Տեղակալ Հայրը իւր եւ Սրբազան Սինոդական Հարց եւ վանքի միաբանութեան կողմից յայտարարած է ձեմարանի մէջ, թէ նոքա ուխտել են նոյնութեամբ պահպանել այս նուիրական տաճարի գրութիւնը: Եւ արդարեւ մինչեւ այսօր ամենայն սրբութեամբ կատարած ենք տեսնում այս ուխտը: Մենք պարտք ենք համարում հրապարակաւ յայտնել այս մասին, որպէս զի ամեն կասկած, եթէ կայ, փարատուի եւ ամենքը հաւատարմութեամբ վերաբերուին դէպի վանքի մտագրութիւնները ձեմարանի մասին:

Միայն նիւթական միջոցներով չէ որ կարելի է ապահոված համարել մի այսպիսի մեծ հիմնարկութեան ապագան: Ի՞նչ կարող է անել զրամբ, երբջերմ համակրութիւն կամ հաստատուն կամք չկայ՝ գործը առաջ տանելու համար: Այդ ջերմ համակրութիւնը, այդ հաստատուն կամքը մենք ակներեւ տեսնումենք եւ ամենայն իրաւամբ այդ առհաւատչեայ ենք համարում, որ ձեմարանի յարատեւութիւնը վանքի կողմից միանգամայն ապահոված է: Մենք հարցի նիւթական կողմը երկրորդական ենք համարում, որովհետեւ շատ անգամ տեսել ենք, որ ազգը Ս. Աթոռոյս համար երբէք իւր լուծայն խնայած չէ երբ զգացել է՝ որ այդ գումարը չի վատնւում: Գործի համար գրամ չխնայող ազգը՝ տեսնելով որ Ս. Էջմիածնի մէջ պահպանւում է մի ձեմարան, ուր աւելի քան երեք հարիւր աշակերտ է ուսանում, որոնցից երկու հարիւրը գիշերօթիկ են—ի հարկէ չի խնայելու եւ սորա համար: Այս հանգամանքները ի նկատի առնելով ձեմարանի գրութեան մասին միանգամայն ապահով կարող ենք լինիլ եւ հանգիստ սրտով շարունակել մեր գործը:— Դառնանք 1882—3 ուս. տարուայ տեղեկագրին:

Յընթացս 1882—3 ուս. տարուայ Մանկ. Ժողովը գումարեցաւ 24 անգամ ձեմարանի վերաբերեալ զանազան խնդիրներ վերաբերութեամբ: Սոցանից գլխաւորներն են.

Տարուայ սկզբում բացուեցաւ Նրբորգ լուարանը, որով պէտք է բոլորուէր ձեմարանի մասնագիտական ընթացքը: Ինչ-

պէս որ առաջին երկու լտարանները մանկավարժական ուղղութեամբ էին կազմակերպուած: այնպէս էլ նոր բացուած Գ. լտարանին նոյն ընթացքը նշանակուեցաւ մանկավարժական եւ փիլիսոփայական առարկաներով եւ գործնական պարապմունքներով: Այնպէս որ մի կողմից մանկավարժութեան եւ սորա օժանդակ փիլիսոփայական գիտութեանց տեսութիւնն էր աւանդւում: միւս կողմից գործնական կրթութիւնն էր մատակարարւում մանկավարժական արուեստի մէջ ընտելանալու համար՝ փորձնական դասերի, խորհուրդների եւ ժողովների միջնորդութեամբ: որոնց ղեկավարում էր պ. Սեգրակ Մանգլինեանը: Անցեալ տարի մենք ուրախութեամբ յիշեցինք, թէ ինչ մեծ օժանդակութիւն պէտք է լինէր վարժոցի տեղափոխուելովը նախկին ժառանգաւորաց Գարոյի մէջ: Գորանով ոչ միայն ամբողջապէս ծխական դպրոցի երեք բաժանմունքների դասատուութիւնը յանձնուելու էր մեր լտարանցիներին իւրեանց վարժութեան համար, փոխանակ մի բաժանմունքի, ինչպէս որ առաջին տարին էր քանի ճեմարանը իւր սեփական վարժոցը չունէր, այլ եւ ձեմարանի առաջին դասարանն էլ փոխադրւում էր այնտեղ այն յուսով, որ՝ եթէ փորձը յաջողէր, ապագայում ձեմարանի Բ. եւ Գ. դասարաններն եւս փոխադրուէին եւ այսպէս թէ մեր լտարանցիների վարժութեան ասպարէզը կ'ալոյնանար եւ թէ ձեմարանը աւելի կ'անոնաւորուած դպրոցական մաս կ'ունենար տնտեսական զգալի թեթեւութեամբ: Բայց կառավարել մի դպրոց մի քանի բաժանմունքներով միայն վարժուող ուսանողներին միջնորդութեամբ անհնարին է: հարկաւոր էր նշանակել օժանդակ ուսուցիչներ. մենք խոտագանք, բայց մեզանից միանգամայն անկախ պատճառներով չկարողացանք մեր խոստումը կատարել, որով թէ վնասեցինք վարժոցի ուսման կանոնաւորութեանը եւ թէ չափազանց ծանրաբեռնեցինք մեր լտարանցիներին գործնական պարապմունքներով ի վնասնոց տնտեսական զբաղմունքների: Դժբաղդաբար առաջիկայ տարին եւս նոյն անցածով հանգամանքներով ենք սկսում, ուստի Բ. եւ Գ. դասարանների միացման խնդիրը վարժոցի հետ դարձեալ պէտք է յետաձգուի:

Վարժոցի կազմակերպութեան եւ մեր ուսանողաց գործնական պարապմունքների ղեկավարութեան մասին անցեալ տա-

բուսայ տեղեկագրիս մէջ հանգամանօրէն խօսել ենք. ուստի աւելորդ է նորից կրկնել այն ամէնը. միայն այդքանս բաւական է ասել, որ առանձին վարժոց ունենալով բոլոր յարմարութիւնների հետ ի միասին մենք անյարմարութիւններ եւս ունինք, որոնց առաջը թէեւ այս տարի չենք կարողացել առնել, բայց տպագայի համար անշուշտ տնօրինելու է. մենք չունինք վարժոցի համար շինութիւն. հին ժառանգաւորաց Կպրոցի շինութիւնը իւր անյարմարութիւններով ամենին յայտնի է. դորա մէջ երեխայ կրթել կարող ենք ասել անհնարին է: Միւս կողմից վարժոց մտնել ցանկացողների թիւը այնքան մեծ է, որ ամենքին չենք կարողանում բաւականութիւն տալ. շատերը մնում են գուրսը: Բայց եւ այնպէս ստիպուած ենք լինում ամեն մի բաժանմունքի մէջ շատ երեխաներ ընդունելու: Աշակերտաց շատութիւնը թէ շինութեան կողմանէ անյարմար է, քանի որ նստելու տեղ չկայ մեր մութ եւ փոքր սենեակներում եւ թէ այն կողմից, որ նորավարժ ուսուցչաց գործն է զժուարեցնում եւ ի հարկէ այսպիսով վարժոցի յառաջագիմութեանը արգելք լինում: Ազգարշապատում անդեպ տարի գոնեայ մի ծխական դպրոց կար, ուր կարող էին գիմել մեղ մօտ չընդունուածները, իսկ այս տարի այդ դպրոցը փակուեցաւ եւ մենք ստիպուեցանք այնքան աշակերտ ընդունել, որ չենք կարողանում տեղաւորել մեր սենեակներում: մի ահագին բաղմութիւն է, դեռ գուրսը մնաց: Այս հանգամանքը գրաւել է Ամենապատիւ Սրբազան Տեղակալ Հօր ուշադրութիւնը եւ իրայոյս ենք որ վաղարշապատցիք չեն ինայելու իւրեանց ձեռնառութիւնը այս գործում եւ այս տարի իսկ կը հոգան վերացնելու գոնեայ մեր ունեցած անյարմարութիւնների մի մասը: Սորա համար հարկաւոր է որ Ազգարշապատը կամ ունենայ իւր առանցին դպրոցը եւ մենք վարժոցի ամեն մի բաժանմունքի մէջ պահենք ոչ աւելի քան 20—25 աշակերտ եւ կամ գոնեայ մի տնայիսի ընտկարան տայ, ուր կարողանանք ղետեղել վարժոցի մի երկու բաժանմունքի աշակերտներին: Եթէ այս ջիւղի մենք ստիպուած կլինինք կարճելու աշակերտաց թիւը:

Ուսումնական ժողովը գեռ տռաժի տարուանից սկսել էր գրադուիլ ընդհանուր ծրագրի կազմութեամբ եւ սորա համար լրագրութեան միջոցով գիմեց հայ հասարակութեանը խնդրելով նպաստել այդ գործին խորհուրդներով, ծրագիրներով, գիտողութիւններով եւայլն: Մեր հրաւերը մնաց միտնգամայն առանց ուշադրութեան, չնայելով որ մեր կազմիկ ծրագիրը միայն ձեմարանիս համար չէր, այլ բոլոր ազգային ուսումնարանաց: Այս պատճառով անցեալ տարի ծրագրի գործը մնաց անկատար: Այս տարի էլ գիմեցինք արդէն ի ձեռն Ա. Ալինոգի մեր թեմական վերատեսուչներին խնդրելով նոցանից իւրեանց իրաւասութեան ներքոյ եղած ուսումնարաններէ ծրագիրները իւրեանց անձնական գիտումներով հասցնել մեզ եւ դարձեալ մեր խնդիրը մնաց առանց պատասխանի: Ուստի մենք կազմեցինք մի ծրագիր, որ առաջարկումենք հայ հասարակութեան քննադատութեանը:

Մեր ծրագրով բոլոր ազգային ուսումնարանները չորս կարգի են բաժանվում, իւրաքանչիւրը երեք տարուայ ընթացքով: Այս ուսումնարաններն են. ծխական դպրոց, հոգեւոր դպրոց, դպրանոց եւ ձեմարան: Ծխական եւ հոգեւոր դպրոցները պէտքէ ունենան եւ չորրորդ լրացուցիչ դասարաններ այն աշակերտաց համար, որոնք իւրեանց ուսումը շարունակելու չեն: Այդ լրացուցիչ դասարանների համար մենք ծրագիր կազմած չունինք: Մեր ցանկութիւնն է եղել ուսումնարանների ծրագիրը այնպէս կազմել, որ մի դպրոցից միւսը՝ բարձրը մտնողը այն անյարմարութիւնները չունենայ, ինչ որ մենք ամեն քայլափոխում հանգիստումենք: Մեր ծրագիրը կարող է փոփոխութիւնների ենթարկուել եւ այդ կողմից մենք ամենայն շնորհակալութեամբ կլսենք ազգային բոլոր ուսումնարանաց մանկավարժական խորհուրդների եւ փորձառու անձանց գիտողութիւնները, բայց մի բան միայն ցանկալի պէտքէ լինի, որ մեր զանազան կարգի ուսումնարանները իւրեանց ծրագրով իւրեար հետ սերտ կապուած լինին:

Ահա մեր ծրագիրը.

ԺՐԱՊԻՐ.

Վ ԱՐԺՈՑ (Ծխական դպրոց)

1. Բարոյակրթութիւն.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մարդը իբրեւ անդամ ընկերութեան՝ պարզ և ընտանեկան գաղափարներով, որպէս նկարագրուած է մեր ազգային բանաստեղծութիւնը, շեռնարկ՝ Ազգային ընտանեկան աշխարհ պ. Ս. Մանգինեանի:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մարդը ժողովրդեան երեակայութեամբ իբրեւ զիւցաղնացեալ անդամ ընկերութեան:

Շեռնարկ՝ Ազգային զիւցաղնական աշխարհ պ. Ս. Մանգինեանի:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մարդը իբրեւ անդամ ընկերութեան իւր պարզ նախնի և պատմական կեանքով:

Շեռնարկ՝ Նահապետական և հայրենի աշխարհ պ. Ս. Մանգինեանի:

2. Կրօն.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Աղօթք. բացատրել ոչ միայն աղօթքների իմաստը, այլ և առանձին խնամքով վերացնել երեխայոց անիմաստ աղօթասացութիւնը, ջանալով որ աղօթքը նոցա զգացմանց արտայայտութիւն լինի:—Տօների նախընթաց օրերը ծանօթացնել երեխայոց այդ տօների հետ և բացատրել:—Շարաժական խրատ վարժոցի բոլոր աշակերտաց համար իմիասին, նիւթ առնելով նոցա շարաժական կեանքից և քարոզելով նոցա Աստուածային պատուերները:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը աւելի ընդարձակելով և տեղեկութիւն տալով ժամասացութեան գլխաւոր կտորների մասին:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը:

3. Զննական Ուսում.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նիւթ առնել բարոյակրթութեան դասերից, տարուայ եղանակներից և կեանքից. զոր օրինակ՝ ուսումնարան, ծնողական տուն, մարդ և ա-

նասուն, ժամանակ և եղանակ, ամառ և ձմեռ և այլն, ինչպէս ցոյց է տուած աղգային ընտանեկան աշխարհի ուսուցչաց համար նշանակուած մասի մէջ:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նիւթ առնել նոյն աղբիւրներից, զոր օրինակ՝ ուսումնարան, աշուշ, տուն, քաղաք, աշնան վերջին օրերը, ընտանի կենդանիներ, ձմեռ, նոր տարի, մարդկային կեանք, աշխատանք, նիւթեր, գոյք, ձևեր, կշեռք, գարունը պարտիզում և դաշտում, ընտանի կենդանիներ, ամառ և այլն: Տեղագրութիւն Սասունցի Դաւթի:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյն խորագրերը աւելի ընդարձակ՝ հովուական և երկրագործական կեանք իւրեանց մանրամասնութիւններով: և իւրեւ լրումն տալ համառօտ տեղեկութիւններ միւս դասակարգերի մասին: Մարդկային արուեստագիտական առարկաների մասին խօսելիս տարրական տեղեկութիւններ տալ ֆիզիքայից և քիմիայից, Հայրենիքի և Պաղեստինէի համեմատական աշխարհագրութիւնը: Երկրի գնդաձեւութիւնը, Պարզ յիշատակութիւն աշխարհի մասերի:

Ա. Հայոց Էջմ:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Սկզբնական ուսումնական գրագիտութեան, նախ գրել և ապա կարդալ, Պէտք է այնքան վարժել, որ մանուկը կարողանայ կարգաւ բառ առ բառ ամեն գիր, և եթէ այդ դժուար լինի, փորձէ լուծել բառը վանկերի և վանկերը հնչիւնների՝ սկսելով ձայնաւորից և հետ զհետէ կցելով նորան բաղաձայնները, Պէտք է կարողանայ գրել, եթէ ոչ անսխալ, գոնեայ ըստ արտասանութեան ուղիղ, Բերանացի հեքիաթներ և անգիր ոտանաւորներ:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նախագասութիւններով և առողանութեան նշաններով կարգաւ թեւաթուութեամբ գրելու վարժութիւն, ուղղագրութիւնը ստուգել. հարցերով լուծել նախագասութիւնը, ուղիղ արտագրել առանձին տետրակի մէջ սխալ գրած բառերը, կաղմկելով նոցանից համապատշաճ խմբեր, Կարգացածի համառօտ պատմութիւն և գրութիւն, Անգիր ոտանաւորներ:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Կարգացածի բովանդակութիւնը հասկանալ, վարժել գեղեցիկ ընթերցանութեան և այն՝ ամբողջ պարբերութեամբ, Սկզբունք քերականութեան, մասանց բանից որոշումն, հոլովումն և խոնարհումն, ուղղա-

գրութեան կանոններ, թեյաթուրութեամբ անսխալ գրել կարգացածի բը-
նարաններով փոքրիկ շարագրութիւններ, Անգիր ոտանաւորներ:

5. Ռոտայ լէզոն:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Գրել կարգաւու սկիզբն. շուտով սկսել Ռուսաց լեզուով գրուցագրու-
թիւն. ամեն մի հայերէն ասած նախագասութիւն կրկնել ուսներէն թէ
խմբովին թէ առանձին ընտելացնելով աշակերտաց լսողութիւնը ուղիղ
արտասանութեան, Թամանակի ամենափոքր մասը պէտք է նուիրել
թարգմանութեան և հայերէն խօսակցութեան, Տարուայ վերջը հայե-
րէնը պէտք է լսուի միայն թարգմանելիս:

6. Թոթառներէն:

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Ծանօթութիւն թուերի 1-ից մինչև 10ը ամեն գործողութիւններով
և զննական, բանաւոր, մտաւոր և գրաւոր վարժութիւններով, Մանկա-
վարժական Թերթի մէջ տպած հրահանգների համաձայն:

Ձեռնարկ՝ Հէնչէլի թուարանական խնդիրներ:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Ծանօթութիւն թուերի մինչև 100ը նոյն վարժութիւններով. պէտք
է վարժութիւններով սովորեցնել աշակերտներին բառնալու խնդի-
րների մէջ պատահած դժուարութիւնները, Այս դասերին պէտք է տալ
նաև ծանօթութիւն կեանքի այլ և այլ հանգամանքների մասին:

Նոյն ձեռնարկը և իբրև հրահանգ ուսուցչի համար կեանքի հանգա-
մանքների համեմատ թուարանութիւն պ. Ս. Մանգինեանի:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Ծանօթութիւն ամեն թուերի հետ նոյն վարժութիւններով. տար-
բական կոտորակներ, Շարունակութիւն թուարանական իրագիտու-
ի եան:

Երկրաչափական ծանօթութիւն մարմինների հետ զննական եղանա-
կով և մակարդակ կազմելու վարժութիւններ:

Ձեռնարկ՝ կեանքի հանգամանքների համեմատ թուարանութիւն,
մասն վերջին:

7. Գրառքներ:

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Կարգաւուց ատաջ վարժել տարրական գրութեան և գծագրութեան
բարեխառնակների վերայ. այնուհետև գրել բառեր, կազմելով նոցա
վանկերից:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մեկնով և զրջով գրել խումբ խումբ միատեսակ թէ փոքր թէ մեծ տառեր ըստ իւրեանց ծագման գծերից, վարժեցնել բառեր և նախադասութիւններ գեղեցիկ գրելու:

Ձեռնարկ—Մակար Տէր Սարգսեանի:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը շարունակել, սկսելով և ուսուց գեղագրութիւնը:

Նոյն ձեռնարկը:

8. Երգեցողութիւն:

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մանկական երգեր խմբով և դաշնակի ձայնակցութեամբ:

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Աղղային և Եկեղեցական երգեցողութիւն:

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը:

Զբօսանք բոլոր բաժանմունքների համար հայրենագիտական տեղեկութիւններ ժողովելու նպատակով: Երկրագործական ազատ պարամունքներ: Կազմութիւն զանազան ժողովածունքի:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԴԱՍՍՅՈՒՅԱԿ

ՎԱՐԺՈՅԻ.

	ԱՌԱՐԿԱՆԵՐ	ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ		
		Ա.	Բ.	Գ.
1. Բարոյակրթութիւն		3	3	2
2. Կրօն		1	2	2
3. Ձեռնական ուսումն		2	3	2
4. Հայոց լեզու		4	4	4
5. Ռուսաց »		»	»	6
6. Թուաբանութիւն		4	5	3
7. Գրութիւն		2	3	2
8. Երգեցողութիւն		2	2	1
	Գումար	18	22	22

Ծանօթութիւն.

Այս դասացուցակը տարուայ ընթացքում ըստ հանգամանաց կարելի է փոփոխութեան ենթարկել:

ՀՈՒՆԵՌՈՒ ԴՊՐՈՅ.

1. ԿԵՆ.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Սրբազան Պատմութիւն Հին և Նոր Կտակարանի
Ձեռնարկ՝ Սրբազան Պատմութիւն Հայորդւոյ, Բերանացի բացադրու-
թիւն եկեղեցական գլխաւոր տօների:

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Նշոյնը և Ժամակարգութիւն:

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Համառօտ պատմութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ,
Ձեռնարկ՝ Մեղքիսեգեկ եպիսկոպոսի Մուրատեան (Հանելով սորա
միջից եկեղեցական մատենագրութեան և քաղաքական պատմութեան
վերաբերեալ մասերը),
Հանգանակ հաւատոյ,
2. Հայոց Էջմ.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. կազմութիւն նախագասութեան — Ա. մասն քերա-
կանութեան:

Ձեռնարկ ուսուցչի համար — Քերականութիւն պ. Ս. Պալասանեանի,
իսկ աշակերտի համար — պ. Կ. Կոստանեանի Հիւսուածքի աշխարհա-
բարը: Յարմարաւոր ոտանաւորներ: Գրաւոր պարապմունք — կարգա-
ցածի բովանդակութիւնը գրել:

Իրրե նախապատրաստութիւն գրաբանի, կարգալ Ս. Աւետարանի ա-
ռակները:

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. Բ. մասն քերականութեան: Աշակերտաց ընթերցա-
նութեան համար ընտրել մի որ և է յարմարաւոր գիրք (ըօր. Անա-
հիգ, Խօսող կաղնի եւ այլն), Անգիր ոտանաւորներ: Գրաւոր պարապ-
մունք — ոտանաւորները արձակի փոխել. պարզ շարագրութիւններ
տարուայ դասընթացի գիտութիւններէց:

Գրաբան. Ա. մասն քերականութեան: Ընթերցանութեան գիրք Ծաղ-
կաբաղի Ա. մասն պ. Կ. Կոստանեանի. Քերականութեան ձեռնարկ՝ Խո-
նարհումն բայից և հօլովումն անուանց պ. Կ. Կոստանեանի: Գրաւոր
պարապմունք — Թարգմանել դասագրքից գրաբանից աշխարհաբար:

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. ծանօթութիւն արեւմտեան աշխարհաբարի: Աշակեր-
տաց համար ձեռնարկ «Ճաշակ Հայ մատենագրութեան». կարգալ և

փոխադրել արեւելեան աշխարհաբարի բերանացի և գրաւոր, Գրաւոր պարապմունք տարուայ դասընթացի գիտութիւններէց:

Գրաբառ. Բ. մասն. քերականութեան, պարզ շարագրութիւն, Ձեռնարկ՝ Ծաղկաբաղի Բ. մասն պ. Կ. Կոստանեանի և Գարագաշեան քերականութիւն, Գրաւոր պարապմունք — թարգմանել աշխարհաբարից գրաբառ. փոխադրել ոտանաւորները արձակի:

Յ. Ուսուցիչ լէզոն.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն և գրութիւն (արտագրելով և թելատրելով). անգիր ոտանաւորներ:

Ձեռնարկ. Нашъ другъ Корфа կամ книга для чтенія Паульсона և կամ մի այլ գիրք համապատշաճ ընտրութեամբ:

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն, գրութիւն (թելատրութիւն). Անգիր ոտանաւորներ, Ծանօթութիւն պարզ նախադասութիւնների, հոլովումն կանոնաւոր անուանց և խոնարհումն կանոնաւոր բայերի:

Ձեռնարկ՝ Дѣтскій Міръ 1 ч. Ушинскаго:

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն, կարգացածը ուսերէն պատմել, Անգիր ոտանաւորներ, Ոտանաւորները արձակի վերածել և գրել, Անկանոն անունների և բայերի հոլովումն և խոնարհումն:

Ձեռնարկ՝ Христоматія Поливанова:

Դ. Մարեմարիտ.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Թուաբանութիւն. թուաբանական չորս գործողութիւնները ամբողջ թուերի հետ, Ձեռնարկ՝ Կեանքի հանգամանքների համեմատ թուաբանութիւն պ. Ս. Մանգինեանի:

Երկրաչափական գծագրութիւն նկարչութեան հետ:

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Թուաբանութիւն — թուաբանական չորս գործողութիւնները կոտորակների հետ, Ձեռնարկ՝ թուաբանական խնդիրներ Սիմէօնեանի և Վարձեւեանի:

Տարրական երկրաչափութիւն (Գծաչափութիւն).

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Թուաբանութիւն. Երեքի կանոնները:

Հանրահաշիւ (Ալգեբրա). Ալգեբրայական չորս գործողութիւններ, հաւասարութիւններ Ա. աստիճանի, յարաբերութիւններ:

Տարրական երկրաչափութիւն (չարժաչափութիւն)

5. Ընդհանուր պատճառ-նշան.

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Արեւիք և Յունաստան.

Ձեռնարկ Վելտերի, Թարգ. պ. Ն. Ղուկասեանի.

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Հռովմ.

Նոյն ձեռնարկը.

6. Ընդհանուր աշխարհագրո-նշան.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհագրութեան Բնական և Աստեղաբաշխական տարերքը.

Ձեռնարկ — պ. Ն. Սիմեոնեանի.

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Ասիա, Աֆրիկա, Ամերիքա և Աւստրալիա.

Նոյն ձեռնարկը.

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Եւրոպա.

Նոյն ձեռնարկը.

7. Հայոց պատճառ-նշան և Աշխարհագրո-նշան Հայաստանի.

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Հայոց պատմութիւն կենսագրական եղանակով և Հայաստանի Աշ-
խարհագրութիւն.

8. Ռուսաց պատճառ-նշան և Աշխարհագրո-նշան Ռուսաստանի.

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Ռուսաց պատմութիւն կենսագրական եղանակով և Ռուսաստանի
աշխարհագրութիւն (Ռուսաց լեզուով) :

9. Բնական պատճառ-նշան.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Բնութեան երեք թաղաւորութիւնները.

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Նոյնը.

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Նոյնը.

10. Ձայնագրութիւն.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Ձայնաստիճանների սկզբնական վարժութիւն. Տևողութեան արժէքի վարժութիւններ. բաղնամանց ընդհանուր կրթութիւն. գրելով և երգելով ուսուցումն նախնական աձ. ահ. բձ. բզ. շարականի եղանակների. Ազգային երգեր.

Չեռնարկ Թաշճեանի.

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Ուսուցումն նախնական դձ. գկ. դձ. դկ. շարականի եղանակների. նոյն ձեռնարկը.

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Ուսուցումն շարականի ութը ձայների դարձուածքների, մեղեդիների և Եկեղեցական տաղերի. նոյն ձեռնարկը.

11. Գեղագրութիւն.

Ա. և Բ. դասարանների մէջ Հայոց, Ռուսաց և Տաճկերէն (Տաճկահայատականի համար) գեղագրութիւն.

12. Գեղագրութիւն և Նկարչութիւն.

Բոլոր երեք դասարանների համար.

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՅՈՒՑԱԿ

ԴՊՐՈՅԻ

	ԱՌԱՐԿԱՆԵՐ	ԴԱՍԱՐԱՆՆԵՐ.		
		Ա.	Բ.	Գ.
1. Սրօն.		3	3	3
2. Հայոց լեզու.		5	4	4
3. Ռուսաց "		5	6	6
4. Մատեմատիքա.		4	4	4
5. Ընդհանուր Աշխարհագրութիւն.		2	2	3
6. Ընդհանուր Պատմութիւն.		"	2	2
7. Հայոց պատմութիւն և աշխարհագրութիւն.		"	2	"
8. Ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն.		"	"	3
9. Բնական պատմութիւն.		2	3	2
10. Ձայնագրութիւն.		4	2	2
11. Գծագրութիւն և նկարչութիւն.		2	1	1
12. Գեղագրութիւն.		3	1	"
Գումար.		30	30	30

ԳՊՐԱՆՈՅ

1. Կէն.

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Քրիստոնէական վարդապետութիւն Հայաստանայց եկեղեցւոյ,
Ձեռնարկ—Հրահանգ Մսերի:

Կարգ Աստուածապաշտութեան — Մեկնութիւն արարողութեան Ս.
Պատարագի:

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն Հին Կտակարանի հանդերձ բացազրութեամբ:

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն Նոր Կտակարանի հանդերձ բացազրութեամբ,
եկեղեցական Տօմար:

2. Հայոց Էկոն:

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. Տեսութիւն մատենագրութեան,
Ձեռնարկ—Ժաղկաքաղ հատուածք հին և նոր մատենագրութեան,
Վենետիկ:

Գրաբառ. ընդարձակ քերականութիւն:
Ձեռնարկ—Տարերք քերականութեան Բագրատունւոյ,
Ընթերցանութեան գիրք—Եղեիկ և Ծաղկաքաղի Գ. մասը պ. Կ. Կոս-
տանեանի:

Գրաւոր պարապմունք—շարագրութիւն նկարագրական և պատմական
բովանդակութեամբ, Անգիր հատուածներ:

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար, Հայոց մատենագրութեան պատմութիւնը մինչև ԺԲ.
դարը:

Գրաբառ. շարագրութիւն՝ ճառեր:
Ընթերցանութեան գիրք՝ Հատընտիրք, Վենետիկ և Գ. գիրք Խորենա-
ցւոյ, Անգիր հատուածներ:

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար, Հայոց մատենագրութեան պատմութիւնը մինչև ԺԸ.
դարը:

Գրաբառ. շարագրութիւն—խորհրդածութիւններ:
Ընթերցանութեան գիրք—Լամբրոսնացւոյ ճառերը, Անգիր հատուած-
ներ:

3. Ռուսաց լեզու:

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն և բերանացի պատմութիւն Ռուսաց հեղինակների գրուածքներից: Առակներ և անգիր ոտանաւորներ:

Քերականութիւն — Վերլուծութիւն բարդ նախադասութիւնների: Գրաւոր պարապմունք — Փոխադրութիւն ոտանաւորների արձակի, թարգմանութիւն հայերէնից ռուսերէն:

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն և բերանացի պատմութիւն Ռուսաց հեղինակների գրուածքներից: Առակներ և անգիր ոտանաւորներ:

Քերականութիւն. Ստուգաբանութիւն: Զեռնարկ Грамматика Говорова, курсъ I и II.

Գրաւոր պարապմունք — շարադրութիւն նկարագրական բովանդակութեամբ:

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն և պատմութիւն Ռուսաց հեղինակների գրուածքներից: Անգիր ոտանաւորներ և արձակ գրուածքների հատուածներ:

Քերականութիւն — Համաձայնութիւն: Զեռնարկ Грамматика Говорова, курсъ III и IV.

Գրաւոր պարապմունք — շարադրութիւն պատմական բովանդակութեամբ:

Ծանօթութիւն.

Ընթերցանութեան և ոտանաւորների համար Դ. Ե. Զ. դասարանների մէջ առաջարկվումէ. Ժուկովսկի, Պուշկին, Գոգոլ, Արխով, Գլխոտով, Վոյցով, Տոլստոյ, Գոնչարով, Նեկրասով, Լերմոնտով:

Ա. Ձրանոցեր:

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Նախապատրաստական ընթերցանութիւն և գրութիւն — Հրահանգ — Մարգրի դասգրքի Ա. մասը քերականական կանոնների բացատրութեամբ: Նոյն հրահանգների համեմատ գրաւոր վարժութիւն: Բերանացի թարգմանութիւն Մարգրի ընթերցանութեան համար նշանակած գիւրահանգանալի հատուածների: Անգիր սերտողութիւն թեթեւ ոտանաւորների:

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Մարգրի Բ. մասի հրահանգները քերականական կանոնների բացատրութեամբ: Գրաւոր վարժութիւն նոյն հրահանգների համեմատ:

Թարգմանութիւն նկարագրական և պատմական հատուածներից Մարգրի: Անգիր սերտողութիւն առականների հատուածների և ոտանաւորների:

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Մարգրի Գ. մասի հրահանգները քերականական կանոնների բացառութեամբ: Գրաւոր վարժութիւն նոյն հրահանգների համեմատ: Բերանացի թարգմանութիւն Լըվրէի ծաղկաքաղից: Անգիր սերտողութիւն ոտանաւորների (հատուածներ):

5. Հանրահաշիւ.

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Ինքնապատկութիւն, արմատ, անհամաչափ քանակութիւններ, Քանակութիւններ կոտորակ և բացասական աստիճաններով: Երմատներով հաւասարութիւններ: Հաւասարութիւն Բ. աստիճանի: Յառաջատուութիւն:

Ձեռնարկ — Руководство Алгебры Малинина и Вуренина, Алгебра Бычкова, Задачник Пржевальскаго.

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Լոգարիթմոս (նշանակ). անյայտ աստիճաններով հաւասարութիւններ, անորոշ հաւասարութիւններ: Հաւասարութիւնների հետադասութիւն:

Նոյն ձեռնարկները:

Զ. ԴԱՍԱՐԱՆ

Պրկնութիւն հանրահաշուի: Նիւտոնի բինոմը, կարգեր, անորոշ դործակիցների եղանակ: Ըլգերրայական քանակութիւնների ամենամեծ և ամենափոքր նշանակութիւնները:

Պրկնութիւն թուարանութեան:

6. Երկրաչափութիւն.

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Դժաշափութիւն և հարթաշափութիւն:

Ձեռնարկ Руководство къ Геометріи Давидова.

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Ծաւալաշափութիւն:

Նոյն ձեռնարկը:

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Պրկնութիւն Երկրաշափութեան:

7. Եռանկյունապատկերներ.

Ձ. ԴԱՍԱՐԱՆ.

Հարթ եռանկյունաչափություններ.

Չեանարկ — Тригонометрия Малинина.

8. Տիկեպատկերներ.

Ձ. ԴԱՍԱՐԱՆ.

Համառոտ աստղաբաշխություններ.

Չեանարկ Космография Малинина.

9. Ընդհանուր պարամետրեր.

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Միջին զարկեր.

Չեանարկ — Հուլիան և Իսլամական.

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Նոր զարկեր.

Չեանարկ — Իսլամական.

Ձ. ԴԱՍԱՐԱՆ.

Նորագույն ժամանակ և կրկնությունները ընդհանուր պատմություն.

Նոր ձեռնարկները.

10. Հայոց պարամետրեր.

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Հին պատմություններ մինչև Դ. զարկ.

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Դ. զարկի մինչև Թ. զարկ.

Ձ. ԴԱՍԱՐԱՆ.

Թ. զարկի մինչև Թ. զարկ.

Կրկնությունները Հայոց պատմություն.

11. Ռուսաց պարամետրեր. (Ռուսաց լեզուով):

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Հին պատմություններ մինչև Թ. զարկ.

Չեանարկ Իսլամական.

Ձ. ԴԱՍԱՐԱՆ.

Նոր պատմություններ Թ. զարկի մինչև Թ. զարկ.

Նոր ձեռնարկ.

Կրկնությունները Ռուսաց պատմություն.



12 ԲՆԱԳԻՏԱՆ-ԻՆ-Ն (Ֆիզիքս) .

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Փորձական ֆիզիքս — Մազնիսականութիւն, Ելեքտրականութիւն և
Ընդհանուր տեղեկութիւններ միւս զօրութեանց մասին — Գլուխ 2
Ձեռնարկ — Բնագիտութիւն Տէրտէրեանի .

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Գալվանականութիւն, ջերմութիւն, ջրաբաշխութիւն, օգարաշխու-
թիւն և ձայն .
Ձեռնարկ — Физика Малнина

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Զօրութիւններ, մեքենաներ, շարժողութիւն, Լյս,
Նշոյն ձեռնարկը,
Կրկնութիւն ամբողջ ընթացքի՝ լրացմամբ .

13. Ֆէլէս .

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընդործարանաւոր քիմիա .
Ձեռնարկ Основания Химии Бокій .

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Գործարանաւոր քիմիա .
Նշոյն ձեռնարկը .

14. ՄԱՐԴԱԿԱՆ-ԻՆ-Ն և ԲՆԱԳԻՏԱՆ-ԻՆ-Ն .

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Համառօտ՝ մարդու կազմութիւնը և կեանքը .

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՅՈՒՑԱԿ

ԴՊՐԱՆՈՅԻ .

ԱՌԱՐԿԱՆԵՐ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐ .

		Դ.	Ե.	[Զ.]
1.	Կրօն	3	2	3
2.	Հայոց լեզու	2	2	2
3.	Տեսութիւն մատենագրութեան	4	»	»
4.	Հայոց մատենագրութեան պատմութիւն	»	3	3
5.	Ռուսաց լեզու	5	4	3
6.	Քրանսերէն	4	4	3
7.	Մատենադրական գիտութիւններ	4	4	4

8.	Ընդհանուր պատմութիւն	2	2	3
9.	Հայոց պատմութիւն	2	2	2
10.	Ռուսաց պատմութիւն	"	2	2
11.	Ֆիզիքա	2	3	3
12.	Գիւմար	2	2	"
13.	Մարդկագիտութիւն և ընտանեկան	"	"	2
		Գումար 30 30 30		

ՇՈՐԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՅՈՒՅԱԿ

ՃԵՄԱՐԱՆԻ.

ԸՌԱՐԿԱՆԵՐ

ԼՍԱՐԸՆԵՐ.

Լ. Բ. Գ.

1.	Ընդհանուր եկեղեցական պատմութիւն	2	"	"
2.	Մեկնութիւն Ս. Գրոց	"	2	2
3.	Եկեղեցական մատենագրութիւն Հայոց	"	"	3
4.	Հայոց լեզու	2	"	"
5.	Նոր մատենագրութիւն Հայոց	2	"	"
6.	Քննական քերականութիւն	2	"	"
7.	Հնախօսութիւն Հայաստանի	"	3	"
8.	Տրամաբանութիւն	2	"	"
9.	Մանկավարժութիւն	2	"	"
10.	Բարդական Փիլիսոփայութիւն	"	"	2
11.	Հոգեբանութիւն	"	4	"
12.	Մետոդիքա	"	"	2
13.	Ընդհանուր գրականութիւն	2	2	2
14.	Ռուսաց գրականութիւն	2	2	2
15.	Գերմաներէն	3	3	4
16.	Պրանտերէն	3	2	1
		Գումար 22 18 18		

Անցեալ տեղեկագրիս մէջ ղետեղուած ցուցակից երեւում է, որ 1882—3 ռւս. տարուայ սկիզբը պէտքէ ժողովուրդէն ձեմարան 157 հոգի: Սոցանից չվերագարձան 5-ը. նոր ընդունեցինը—ժառանգաւորաց Վսրոյից 35 գիշերօթիկ աշակերտներ, զանազան

տեղերից 39 գիշերօթիկ եւ 117 երթեւեկ աշակերտներ. ուրեմն ընդհանուր թիւ աշակերտաց էր յընթացս 1892—3 ուս. տարուայ 336, որոնցից 219 ը գիշերօթիկ:

Մայիսին եղան հրապարակական քննութիւններ վարժոյցի երրորդ բաժանմունքում, երրորդ դասարանում, վեցերորդ դասարանում եւ երրորդ խարանում. իսկ միւս դասարանների մէջ դասերը շարունակուեցան մինչեւ Մայիսի 15 ը եւ այդ դասարանների աշակերտները փոխադրեցին իւրեանց տարեկան յառաջադիմութեան թուանշաններով:

Առաջին հարցաքննութիւնը Ք. խարանում պատուեց իւր ներկայութեամբ Ամենապատիւ Բարձր Սրբազան Տեղակալ Հայրը, իսկ միւս օրերը ներկայ էին լինում միաբան Ս. Հայրերից ոմանք:

ՅՈՒՅԱԿ ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆԱՀԱԿԵՐՏԱՅ.

	Աւուսոյն	Վերականգնել	Բացել	Կրթական արժանացումը ստանալ	Արժանի կրթութեամբ կրթուող	Կրթական արժանացումը ստանալ	Կրթական արժանացումը ստանալ	Կրթական արժանացումը ստանալ
Երրորդ խարանից	6	»	»	1	»	»	»	7
Երկրորդ »	»	10	»	1	1	»	»	12
Առաջին »	»	16	»	»	»	»	»	16
Վեցերորդ դասարանից	»	10	»	»	»	»	»	10
Հինգերորդ »	»	15	»	»	2	2	»	19
Չորրորդ »	»	10	»	»	2	7	»	19
Երրորդ »	»	25	3	»	4	4	»	36
Երկրորդ »	»	31	8	1	11	2	1	54
Առաջին »	»	26	7	»	10	»	»	43
Երրորդ բաժանմունքից	»	28	6	»	7	»	»	41
Երկրորդ »	»	31	7	»	8	»	»	46
Առաջին »	»	24	7	»	2	»	»	33
Գումար	6	226	38	3	47	15	1	336

Այս հաշուից երեւում է, որ 100 ին 67 փոխադրուել են, 100 ին 11 մնացել են դասարաններում, հարկւրին 4 արձակուել են*):

(*) Անցեալ տարի 100 ին 62 փոխադրուել էին, 25 - մնացել եւ 8 ը — արձակուել:

Այս տարի աւարտեցին իւրեանց ուսման ընթացքը Գ. լսա-
րանից վեց ուսանողները:

Գեօնջեան Ենովք Ալէքսանդրապօլցի,

Կանայեան Ստեփաննոս Իգգիրցի,

Տէր Բարդուղիմէոսեան Բէորգ Պրուսացի,

Տէր Գաբրիէլեան Սարգիս Քութայիսեցի,

Տէր Մկրտչեան Կարապետ Ագուլեցի,

Տէր Պօղոսեան Պօղոս Ալէքսանդրապօլցի:

Սօցանից Գեօնջեանը եւ Տէր Պօղոսեանը Հրաւիրուեցան Շա-
շի ուսուցիչ: Տէր Բարդուղիմէոսեանը եւ Տէր Մկրտչեանը Նշա-
նակուեցան ուսուցիչ եւ վերակացու ձեմարանում: Իսկ Կանա-
յեանը եւ Տէր Գաբրիէլեանը գնացին արտասահման ուսումը
շարունակելու՝ առաջինը իւր հաշուով, իսկ երկրորդը Պ. Աղէք-
սանդր Մելիք Հայկազեանի, որ իւր սեփական արգիւնքից Նշա-
նակել էր 840 ռ. ի տարին եւ յանձնել էր ձեմարանիս ուսուց-
չական ժողովին ընտրել իւր ուսումնաւարտներից մինին արտա-
սահման ուղարկելու համար: միանգամայն խոստանալով որ երբ
այս առաջինը աւարտէ իւր ուսման ընթացքը՝ միւսին ուղարկէ
ըստ ընտրութեան խորհրդոյ ձեմարանի: Աւսուցչական ժողովը
ընտրեց Տէր Գաբրիէլեանին եւ պայման կապեց նորա հետ, որ
երեք տարուայ ընթացքում նա ուսանի Աստուածաբանական
գիտութիւնք եւ պարտաւորուի իւրաքանչիւր տարուայ փոխա-
րէն մի տարի եւ կէս ծառայել ուսուցչութեան պաշտօնով ձե-
մարանում կամ մի որ եւ է ազգային ուսումնարանում:

Ի բոլոր սրտէ շնորհակալ ենք Պ. Մելիք Հայկազեանից, որ իւ-
րեան յատուկ առատաձեռնութեամբ հոգացողութիւն է անում
ձեմարանի եւ մեր ազգային ուսումնարանների համար ուսու-
ցիչներ պատրաստելու: Այս, միանգամայն երախտապարտ ենք
առ Պ. Մելիք Հայկազեանը եւ սիրելի է մեզ յուսալ, որ պարոնի
գովելի ընթացքին հետեւողներ կլինին եւ մեր այլ մեծատուննե-
րը, որով կարճ ժամանակուայ ընթացքում կպատրաստուին ըն-
տիր ուսուցիչներ մեր ազգային ուսումնարանների համար: Ապա
թէ ոչ այժմ այնքան ազմանափակ է ուսուցչաց թիւը եւ այն-
քան մեծ ուսուցիչների կարօտութիւնը, որ մեր ուսումնարան-
ների վարչոթ թիւնները մեծ նեղութիւն են քաշում պակասած

ուսուցչաց թիւը լրացներու համար եւ շատ անգամ ամենագլխաւոր առարկաներ մնում են առանց պւանդելու՝ ուսուցչաց պակասութեան պատճառով:

Աշակերտաց ներքին կացութեան մասին անցեալ տարի տեղեկագրիս մէջ երկար խօսած լինելով, այժմ կրկնելու միեւնոյնը կարեւորութիւն չենք համարում: Միայն ցանօվ պէտք է արձանագրենք այստեղ, որ այս տարի Փետրուարի 2 ին վախճանեցաւ մեր երկրորդ դասարանի աշակերտ Երեւանցի Յարութիւն Յովակիմեանը, որ վարակիչ տենդով հիւանդանալով մի քանի օրուայ մէջ կենքից մահկանացուն: Միւս հիւանդները, չնայելով որ մի քանի ծանր հիւանդութեան դէպքեր ունեցանք, բարեբաղդաբար առողջացան:

ՅՈՒՅԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՅ

ԸՍՏ ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ի. ՌՈՒՍԱՍԱՆ.

Ա. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ	
ԲԵՍԱՐԱԲԱՆԻ ԱԻՃԱԿ	
Գիշ. երթ.	
Ֆիշնէ քաղաք.	2
Նոր Նախիջեան »	4
Նիսվիթա գիւղ.	1
Թոփթի »	1
Օրրաղար քաղաք.	3
Վարասուրաղար »	4
Օգեսայ »	1

Գումար 16

Բ. ԱՅԳԱՐԱՆԻ ԱԻՃԱԿ.

Սոլդոկ քաղաք.	2
Ղաղար »	1
Ղարաջալիլ գիւղ.	1
Նոր Արմաւիր »	2
Վլադիկապոլէ քաղաք.	1

Գումար. 7

Գ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՏԻ

ԱԻՃԱԿ	
Տփլիս քաղաք.	3
Մանգլիս գիւղ.	1
Չալալոլի »	2
Վարդարուր »	1
Օձուն »	1
Դիլիջան »	2
Բարվանսարայ »	1
Գուլայիս քաղաք »	2
Դուշեթ »	1
Սոնախ »	1
Ջաբաթալայ »	1
Ախալցխա »	4
Ծաղրուլ գիւղ.	1
Սուլդա »	1
Յիւնվալ »	1
Գանձակ քաղաք.	1

Գումար 23

Դ. ԱՐՁԱՆԻ ԱԻՃԱԿ.

Շուշի քաղաք.	4
Հաղրուս գիւղ.	1

Խլաթաղ	1	»	Ղոցղիղիբան	1	»
Նորշեն	1	»	Թալիշ	1	»
Փիրաջամալ	1	»	Մարգարագիւղ	1	»
Նուսիթ քաղաք	2	»	Հ. Եղջիլար	1	2
Նիսի	2	»	Բլուր	1	»
Վարդաշեն	2	»	Իգդիր	3	3
Դաշբուլաղ	1	»	Իգդիրամիա	2	»
			Աողբ	»	1
Գումար	15	»	Գարարաղար	1	»
			Ալիդամար	»	1
Ե. ՀԱՄԱԽՈՒՎ ԳԻՃԱԿ.			Աղիաման	2	2
Սաղիան գիւղ	1	»	Աղարան	4	3
Խաշմաղ	1	»	Ախթա	»	1
			Ն. Բայաղլիս քաղաք	1	»
Գումար	2	»			

Զ. ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԱԿ

Երևան քաղաք	16	»	Ե. ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿ.		
Զիլամիու գիւղ	1	»	Կարս քաղաք	1	»
Ղամարու	1	»	Ղալախան գիւղ	1	»
Բաշնորաշեն	»	2			
Ալեքսանդրապոլ քաղաք	6	3	Գումար	2	»
Մեծ Վարաբիլիսա գիւղ	4	»	II ՏԱՀԱՆԱՍԱՆ		
Հ. Նախիջևան քաղաք	4	»	Ա. ՏԱՀԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ		
Աստապատ գիւղ	1	»	Հ. Բայաղլիս	1	2
Ագուլիս	3	»	Ալաշկերտ	5	»
Փորագաշտ	1	»	Արարկեր	2	»
Նորս	1	»	Երզնկայ	1	»
Տաթև	2	»	Արաբա	4	1
Մեղրի	1	»	Տիգրանակերտ	2	»
Դարբաս	1	»	Մուշ	3	1
Քաջարան	1	»			
Բոնակոթ	2	»	Գումար	18	4
Առաջաձոր	1	»	Բ. ԱՆԱՏԱՆԻ		
Խնձորէս	1	»	Դիլիճիկ	1	»
Ուղ	»	1	Ինչիա	1	»
Մարաղ	»	1	Պրուսա	5	»
Օւղարշապատ	17	51	Տրապիզոն	2	»
Ղազան	1	»	Հաբին Բարաշխար	2	»
Աշտարակ	4	»	Աֆիոն Բարաշխար	1	»
Բիւրական	1	»	Քեթնայ	1	»
Փարպի	»	1	Նիկոմիդիայ	2	»
Փռնազանոց	1	»			
Ալիբեկու	2	»	Գումար	15	»
Ջէյվայ	3	»	Գ. ԿԻԼԻՍԻԱ		
Հաջիլար	»	1	Անիթափ	2	»
Աղջաղալա	1	6			
Սամաղար	1	1	Գումար	2	»
Քեթրիալու	»	1			
Ղուրտուղուլի	»	»			
Գեղլու	»	1			
Հաջրիար	»	1			

Գ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՏԿԱՍՏԱՆ.	Խոյ.	2	«			
Կ. Պօլս.	19	2	Սալմաստ.	1	»	
Եզրիանապօլիս.	1	»				
Ռոզոսդո.	1	»	Գուժար.	6	»	
Դարդանել.	1	»				
			IV ՌՈՒՄԱՆԻԱ.			
	Գուժար	22	2	Փօքշան.	1	»
III ՊԱՐՍԿԱՍՏԱՆ						
Դափրէժ.	3	»	Գուժար.	1	»	

Անցեալ տարի ութը գրականական ժողով ունեցանք: Այս ժողովներէից Հինգին Գ. լսարանի ուսանողներէից բերանացի ատենաբանեցին՝ Այվաղեան Յարութիւնը Ս. Ս. Թարգմանչաց տօնին, Տէր Բարգուղիմէոսեան Գէորգը — Ս. Ս. Թագէտսի եւ Բարգուղիմէոսի տօնին, Տէր Դաբրիէլեան Սարգիսը — Ս. Ս. Սա-
հակայ եւ Մեսրոփբայ տօնին, Տէր Պօղոսեան Պօղոսը — Ս. Ս. Վարդանանց զօրավարաց տօնին եւ Կանայեան Ստեփաննոսը — Ս. Հօր մերոյ Գրիգորի Լուսաւորչի մուտն ի Վերապն տօնին:

Այս վերջին ժողովը պատուեց իւր ներկայութեամբ Ամենապատիւ Բարձր Սրբազան Տեղակալ Մակար Արքեպիսկոպոսը միաբան Հարց մի քանիսի աջակցութեամբ:

Բացի բանաւոր ատենախօսութիւններէից սոյն ժողովներին եղան նաեւ մասնակցողներ Ա. լսարանից գրաւոր կերպով՝ Խաչատրեան Մանուկ, Պոսեան Ներսէս, Վարդանեան Կարապետ, Մուրադեան Նիկողայոս, Տէր Յակովբեան Տիգրան, Սուրբանշահեան Մելքոն, Յովհաննիսեան Տիգրան, Տէր Աւետիքեան Միքայել, Տէր Վրթանիսեան Քրիստափոր, Տէր Պետրոսեան Յովսէփ եւ Զ. դասարանից Մկրտչեան Սարգիս:

Միւս յերեք ժողովները տօներէից գուրս օրեր էին եւ նոցա նիւթը Մանկավարժութիւնն էր եւ Ընդհանուր Պատմութիւնը: Սոցա մասնակցեցին Բ. լսարանից՝ Պէքարեան Յակովբ, Զամինեան Արքաշամ, Իսկ Գ. լսարանից՝ Տէր Պօղոսեան Պօղոս:

Անցեալ 1881 — 2 ուս. տարուայ ուսուցիչներէից եւ վերակա-
ցողներէից անձնական պատճառներով տարուայ անկէից թողին
ձեմարանը՝ Գեորգ Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեան, Պ. Մար-

տիրոս Սիմէօնեան, (որի մահո՛ւան դու՛ժը մեզ ամենիս առան-
ձին ցաւ պատճառեց), Բարսեղ Բաթումեան, Սսկան Յովհան-
նիսեան. 1883 ի Յունաբոյժից՝ Պ. Պ. ԲԺ. Գրիգոր Տէր Գրիգորեան,
Մարտիրոս Գէրէստէճեան, Առաքել Սաղինեան եւ քարտուղար
Դարեգին Տէր Արիստակէսեան:

Նոր հրահրուեցան՝ Արժ. Նիրեմ Սարկաւադ Սուքիասեան,
Պ. Սեդրակ Արաբասեան. իսկ բժշկի պաշտօն վարումէն ժամա-
նակաւորապէս գաւառական ԲԺ. Տէր Գաստարեանը:

Անցեալ 1882 — 3 ուս. տարուայ ընթացքով գաստուու էին
ձեմարանում.

Գէր. Գրիգոր Նախնայոյն Ազգայնեան.

Աստուածաբանութիւն, Կրօն և Ընդհանուր Եկեղեցւոյ Պատմութիւն.

Արժանապարհ — Կէրէղ Վարդապետ Սրապեան.

Կարգ Աստուածապաշտութեան, Եկեղեցական Տոմար և Հայոց լեզու.

Արժանապարհ — Դեանդ Վարդապետ Յովնիսեան.

Չայնագրութիւն. նաև վարումէր վերակացութեան պաշտօն.

Պ. Աւերբակ Մանրէնեան.

Տրամաբանութիւն, Մանկավարժութիւն, Բարոյական Փիլիսոփա-
յութիւն, Հոգեբանութիւն. նաև ղեկավարումէր վարժոցի երեք բա-
ժանմունքների և ձեմարանի առաջին դասարանի մէջ մեր լսարանցոց
գործնական պարապմունքները:

Պ. Փէլկայոյն Վարդանէան.

Ընդհանուր և Ռուսաց Գրականութեան Պատմութիւն, Ընդհանուր
Պատմութիւն և Գերմաներէն լեզու.

Պ. Սարգիսնայն Պալատանէան.

Հայոց Պատմութիւն և Փրանսերէն լեզու.

Պ. Կարապետ Կասաբանէան.

Պատմութիւն Հայոց Մատենադրութեան, Տեսութիւն Մատենա-
գրութեան, Քննական քերականութիւն, Հնախօսութիւն Հայաստանի,
Եկեղեցական Մատենադրութիւն և Հայաստանի Աշխարհագրութիւն:

Պ. Աւերբակ Արարատեան.

Մատենադրար և Տիեզերագրութիւն.

Պ. Բժէլի Գլխարկ Տէր. Գլխարկեան.
Բնագիտութիւն, Բնական Պատմութիւն, Բնականութիւն և Առողջապահութիւն. նաև վարումէր բժշկի պաշտօն. (մինչև Յունվար ամիսը).

Պ. Մանդին Մանդինեան.

Ռուսաց լեզու, Ռուսաստանի Աշխարհագրութիւն, Ռուսաց Պատմութիւն և Ընդհանուր Աշխարհագրութիւն. նաև վարումէր վերականգնութեան պաշտօն:

Պ. Մարտիրոս Փէրկոյեան.

Գեղագրութիւն (մինչև Յունվար ամիսը)

Պ. Առաքել Սաֆրեան.

Գծագրութիւն և Նկարչութիւն (մինչև Յունվար ամիսը):

Պ. Ռոբէշ Ռոբէշեան.

Տաճկերէն լեզու (Տաճկահայաստանի համար):

Պ. Արքայէն Սոսթանեան.

Աւագ վերականգն ձեմարանի:

Պ. Աղէստեղ Սիւնեան.

Վերականգն.

Պ. Բժ. Եփրէմ Տէր. Գոռոյեան.

ձեմարանի բժշկի պաշտօնակատար (Յունվարից):

Պ. Գարեգին Տէր. Արքայապետեան.

Քարտուղար (մինչև Յունվար ամիսը):

Տարուայ սկզբին ինձ վերայ մնաց միայն շարաթական հինգ դաս Հանգաբանութիւնից, Ֆիզիքական Աշխարհագրութիւնից և Թուրանութիւնից: Իսկ Յունվարից, երբ Պ. Բժ. Տէր. Գրիգորեանը հրաժարուեցաւ իւր պաշտօնից, նորա բոլոր դասերը ծանրացան ինձ վերայ: Այնպէս որ 1882 — Յի երկրորդ կիսամեակում ես ունեի շարաթական «21» դաս:

Ուսումնական խորհուրդը խոր. տրամաբանութիւն զգաց լսելով ձեմարանի Վեհ. Հիմնադրի մահուան լուրը անցեալ Գեղտեմբերի 6 ին. խնդրեց նիստ կազմեց որոշելու համար թէ ձեմարանը ինչ մասնակցութիւն պէտք է ունենայ յուղարկաւորութեան հանգիստին եւ ինչով պէտք է յաւերժացնէ Բարձր Հանգուցելոյ յիշատակը ձեմարանի մէջ:

Որոշուեցաւ հետեւեալը՝ որ ամենայն ճշտութեամբ կատարուեցաւ.

1. Աշակերտներին դասերից ազատ կացուցանել մինչեւ Դեկտեմբերի 14 ը:

2. Ամեն առաւօտ եւ երեկոյ աշակերտաց հետ եկեղեցի յաճախել հոգեհանգստեան կարգին ներկայ լինելու մինչեւ Դեկտեմբերի 19 ը:

3. Մի ծաղիեայ պսակ պատրաստել ձեմարանի կողմից:

4. Խնդրել Ս. Սինօգից յուղարկաւորութեան հանգիսին Վեհ. Հանգուցերոյ դադարը ձեմարանով անցկացնել եւ սորա հիւսիսային եւ հարաւային դռների մօտ հանգիստներ կատարել:

5. Գ. լսարանի ուսանող Վարապետ Տէր Մկրտչեանին յանձնել մի դամբանական պատրաստել:

6. Այսուհետեւ առ միշտ Հանգուցեալ Վեհ. Հիմնադրի անունը յիշատակել աշակերտաց երեկոյեան աղօթքի մէջ այսպէս.

«Տէր Աստուած մեր՝ յիշեա՛ զհոգի Հիմնադրի ձեմարանիս Տ. Գէորգայ Դ. Հանգուցեալ Վաթուղիկոսի ամենայն Հայոց եւ հանգ՛ զնա ի լոյս երեսաց Քոց»:

7. Քառասուն օր ձեմարանի մէջ առաւօտեան եւ երեկոյեան աղօթքի ժամանակ ասել հանգստեան շարական:

ձեմարանի ուսումնական խորհուրդը չէր կարող անտարբեր մնալ Թիֆլիզում տօնելիք Մեղու Հայաստանի լրագրի 25ամեայ յօրելիանի առթիւ. ուստի որոշուեցաւ մի շնորհաւորական հեռագիր ուղարկել այդ օրը խմբագրութեանը եւ ժողովել ուսուցչաց մէջ 250 ռ. քսան եւ հինգ օրինակ Մեղու ցրուելու համար չքաւոր ուսումնարաններին:

1882 — 3 ուս. տ. Վարժոցի երթեւեկ աշակերտներից ուսումնական պիտոյից համար դրամ ժողովուեցաւ: Այդ գումարի մուտքը եւ ծախքը պարտք ենք համարում հրատարակել ի գիտութիւն ընդհանրութեան և նշանակելով մուտքի մէջ աշակերտաց անուններն ու աղգանունները նոցա տուած անդորրաւ.

գրերի համարները եւ խորաքանչիւրից ստացած գրամի քանակները:

ՄՈՒՏԷ.

Ռ.		Ռ.	
1 Սեղրակ եղիազարեանից	12	43 Պարապետ Մարտիրոսեանից	3
2 Սարգիս Խաչատրեանից	12	44 Երուանդ Տ. Աւետիքեանից	12
3 Գրիգոր Յովհաննիսեանից	12	45 Ղազար Ազիրեղեանից	12
4 Մկրտիչ Ներսիսեանից	18	46 Պարապետ Ասկարեանից	12
5 Աւետիք Եղիազարեանից	12	47 Աղաբեկ Գաւթեանից	12
6 Յակոբ Թորոսեանից	18	48 Յովակիմ Սուքրասեանից	6
7 Նահապետ Յակոբեանից	3	49 Մկրտիչ Յովակիմեանից	12
8 Ղազար Տ. Պետրոսեանից	12	50 Սահակ Նիկողայոսեանից	18
9 Պարապետ Պարճիկեանից	12	51 Գեղամ Ասլանեանից	12
10 Տիգրան Ենգիբարեանից	18	52 Ստեփան Տ. Յակոբեանից	6
11 Վահիթեան Գարրինեանից	6	53 Աւետիս Խաչատրեանից	12
12 Արամազ Զարարեանից	18	54 Աղաջան Յակոբեանից	6
13 Վաղարշակ Սահակեանից	12	55 Անդրէաս Գեորգեանից	12
14 Արտաշէս Մկրտչեանից	6	56 Եղիշէ Տ. Յովհաննիսեանից	6
15 Գեղամ Նաւասարդեանից	6	57 Յովսէփ Խաչատրեանից	18
16 Յարութիւն Գալստեանից	6	58 Յարութիւն Մկրտչեանից	6
17 Արքայ Ստեփանեանից	6	59 Սարիբեկ Սահակեանից	4
18 Սողոմոն Յովհաննիսեանից	12	60 Աղէքսանդր Զանիբեկեանից	12
19 Միքայէլ Բարպաեանից	12	61 Տիգրան Վանայեանից	18
20 Գեղամ Մատթէոսեանից	18	62 Արշակ Յակոբեանից	5
21 Երուանդ Մամիկոնեանից	18	63 Յովսէփ Տ. Մովսիսեանից	10
22 Արշակ Պրոքեանից	12	64 Յակոբ Պարապետեանից	18
23 Արրահամ Գիւլիսեանից	12	65 Ենոք Զանիբեկեանից	18
24 Գարսեան Մարգարեանից	12	66 Պարոյր Յովհաննիսեանից	8
25 Յովհաննէս Իսրայէլեանից	12	67 Տիգրան Սմբատեանից	5
26 Ռուբէն Տ. Մկրտչեանից	18	68 Արամ Արամեանից	18
27 Յակոբ Արիստեանից	18	69 Հմայեակ Անդրէասեանից	18
28 Պարապետ Յակոբեանից	3	70 Եղիշէ Անդրէասեանից	6
29 Տիգրան Տ. Անտոնեանից	6	71 Կիրակ Բարպաեանից	6
30 Յովհաննէս Վարդանեանից	18	72 Միքայէլ Միլիթարեանից	12
31 Գեորգ Առանեանից	18	73 Յարութիւն Հաջոյեանից	18
32 Յիսիմ Մ. Նազարեանից	12	74 Արտաշէս Տ. Յովհաննիսեանից	12
33 Նազար Մ. Նազարեանից	12	75 Արսէն Մնացականեանից	6
34 Վահրամ Պրոքեանից	18	76 Գասպար Հաջոյեանից	18
35 Արշակ Յակոբեանից	12	77 Գրիգոր Վարդանեանից	6
36 Հայրապետ Ղարիբեանից	12	78 Նիկողայոս Տ. Աւետիքեանից	3
37 Լեւոն Ներսիսեանից	18	79 Տիգրան Խաչատրեանից	12
38 Տիգրան Տ. Յովհաննիսեանից	12	80 Ահարոն Տ. Մարտիրոսեանից	12
39 Ռուբէն Զանիբեկեանից	6	81 Ահարոն Վրժանիսեանից	18
40 Գեղեոն Տ. Իսրայէլեանից	5	82 Յարութիւն Պետրոսեանից	12
41 Բարդուղիմէոս Վարդիկեանից	12		
42 Մկրտիչ Բզնունուց	18		

83 Կարապետ Երամեանից	12	87 Կարապետ Բաբարեանից	6
84 Յարութիւն Տրդատեանից	6	88 Յակոբ Թուրեանից	12
85 Միքայէլ Մարկոսեանից	6	Գումար	1003
86 Հմայեակ Յովհաննիսեանից	6		

№ 71 անգորրագրով ստացած վեց-սուրբին Կիւրեղ Բարա-
 յեանից՝ վերագործուեցան իւրեան, որովհետեւ նա չբարոր
 էր, ուստի այդ գրամը մուտքից հանելու է

Ընդ ամենը 997

ՍԱՆՔ. Կարգից լսան Կարապետ Կարապետեանից

Աւթը արշին քաթան 1 20

150 արձիճէ թանաքաման 22 50

Վառելափայտ 273

2 հատ կողպէք 40

Վառարաններ սարքելու 3

Խոշոր տաներ կտրելու և փայտի վերայ կաշեմերու 1 95

Թուղթ № 6 երեսունինը օղմայ 110 80

Քարեալապատ 179 հատ 42 25

26 արկղ քարեգրիչ 22

4 հատ մատեան 4 80

200 քանոն 20

Նստարաններ նորոգելու 15

2 որս կուժ 60

146 դրբի կազմ 36 50

7 դրոս մատիտ 30 24

3 զրաւկոթ 17 28

60 արկղ դրիչ 36

2 զրվանքայ սպունգ 8

20 արկղ թանաքի փոշի 6

40 օրինակ Գիւցազնական Աշխարհ 13 35

40 Նահապետական 24 55

40 Ընտանեկան 15

100 Հէնչէլի թուարանութիւն 39 50

55 Կորֆի Ռուսերէն ձեռնարկ 44 85

42 Դաւթեանի 18 87

50 Հիւսուածք 46

1 Կորֆի ձեռնարկ ուսուցչի համար 70

Մի մետաղեայ կարկին 3 20

Ծառայի 17

Հանապարհածախք և հեռագրիք 57 29

Գումար 931 83

Ծախքը հանելով մուտքից մնումէ վաթսուն եւ հինգ ռուբլի տասնեօթը կոպէկ (65 ռ. 17 կ.) : որ փոխանցուեցաւ 1883 — 4 ռւս. տ. հաշուին:

Մենք վերջացնում ենք մեր խօսքը, ցանկալով որ Ս. Սինօգի, վանքի միաբանութեան եւ ձեմարանի մէջ եղած բարոյական կապը անխզելի մնայ երկար տարիներ եւ ձեմարանը իւր խախտը ընթացքով յարատեւ կեանք ունենայ. Ազգն էլ շարունակ վայելէ այս նուիրական ծաճարի պտուղները, ստանալով այս տեղից ազգային եւ բարոյական դաստիարակութեամբ եւ արդի գիտութիւններով բեղմնաւորուած եկեղեցական պաշտօնեաներ եւ ընտիր ուսուցիչներ ի փառս Սուրբ Աթոռոյս, ի պարծանս Հայ Ազգի եւ յամենայն յիշատակ Հանգուցեալ Հիմնադրի ձեմարանիս:

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՆԱՀԱՊԵՏԱՆ.

1885 — 86.

Սեպտեմբերի 24-էն.

Ս. Էջմիածին:



ՀԱՅ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՒՆ ԳՐԱԴ.



FL0052159

ЦЕНА

4/18

A III

714